ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 29.01.2013թ.

Ո Ր Ո Շ Ու Մ

ԳԲԽ-01/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-01/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի կողմից 09.01.2013թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-01/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. **<u>«Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ն հայտնել է, որ ընկերությունը մասնակցել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից հայտարարված «Ինտերնետ և Կորպորատիվ» ցանցի կապերի ապահովման ծառայությունների «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգին, որը անց է կացվել էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով: Հայտերի բացումը տեղի է ունեցել 2012թ. նոյեմբերի 26-ին, ինչի մասին «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ն տեղեկացել է «info@armeps.am» հասցեից հայտերի բացման արձանագրության վերնագրով նամակից, որին կցված է եղել «xls»-ով կազմված, օտարալեզու գրառումներով փաստաթուղթ՝ ինչը հակասում է «Լեզվի մասին» ՀՀ օրենքին, որի «Financial Evaluation» վերնագրով էջի ուսումնասիրությունից պարզվել է, որ «Յուքոմ» ՍՊԸ-ի գնի առաջարկում առկա է անհամապատասխանություն՝ «EO value» սյունակում

նշված է 67.950.000 ՀՀ դրամը, ինչը գերազանցում է «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի նույն այունակում առաջարկած առանց ԱԱՀ-ի գինը՝ 66.666.667 ՀՀ դրամը: Ընկերության համար անհասկանալի է, եթե «Յուքոմ» ՍՊԸ-ի գինը «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի առաջարկած գնից բարձր է, ինչպես է «Յուքոմ» ՍՊԸ-ն ճանաչվել առաջին տեղը զբաղեցնող մասնակից, իսկ եթե «Յուքոմ» ՍՊԸ-ի գնի առաջարկում առկա է անհամապատասխանություն, «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի 7.2.1 կետի համաձայն հանձնաժողովի անդամը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է նույն կետում նշված արձանագրությանը, ինչը հանձնաժողովի կողմից չի իրականացվել:

Այնուհետև 2012թ. դեկտեմբերի 20-ին «info@armeps.am» հասցեից «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ն ստացել է «Արդյունքների հրապարակում» վերնագրով էլ. նամակ, որին կցված է եղել «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, ինչը, հաշվի առնելով «Յուքոմ» ՍՊԸ-ի առաջարկած գինը, հակասում է «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի 7.3.3 կետին:

Հաշվի առնելով, որ բացի հայտերի բացման նիստի արձանագրությունից և «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունից, այլ տեղեկատվություն ընթացակարգի վերաբերյալ «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ն չի ստացել: 20.12.2012թ. ընկերությունը դիմել է պատվիրատուին՝ հիշյալ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների և «Յուքոմ» ՍՊԸ-ի հայտի և որակավորումը հավաստող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակների ստացման խնդրանքով, ինչը 21.12.2012թ. թիվ ԳԿ-239 գրությամբ մերժվել է՝ հղում կատարելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1916-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 23, 24, 25, 26 և 32 կետերի վրա՝ անտեսելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները:

«Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ն հայտնել է նաև, որ ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1916-Ն որոշմամբ հաստատված կարգը չի արգելում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված արձանագրության կազմումը, դրա և մասնակցի հայտի և որակավորումը հավաստող փաստաթղթերի տրամադրումը ընթացակարգի մասնակիցներին «armeps» համակարգի միջոցով:

Հաշվի առնելով, որ հայտերի բացումը տեղի է ունեցել 2012թ. նոյեմբերի 26-ին և հիմք ընդունելով «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի 7.5 և 8.1

կետերը՝ «Յուքոմ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու առավելագույն ժամկետը պետք է լիներ 11.12.2012թ.-26.11.2012թ./ հայտերի բացման օր/+ 5 աշխատանքային օր/ 7.5 կետով սահմանված ժամկետ/+3+3 աշխատանքային օրեր/ 8.1 կետով սահմանված ժամկետ/, սակայն «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակումն իրականացվել է 2012թ. դեկտեմբերի 20-ին, ինչը հակասում է «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի պահանջներին:

Վերոգրյալ տեղեկատվության չտրամադրումը, ընթացակարգի ժամկետների խախտումները հակասում են նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ն խնդրել է չեղյալ համարել «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգը:

2. **<u>ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>**.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 16.01.2012թ. N 03/032-72 գրությամբ դիմել է ՀՀ կառավարության աշխատակազմին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 09.01.2013թ. «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ կառավարության աշխատակազմը 24.01.2013թ. N ԳԿ-16 գրությամբ «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի կողմից «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից հայտարարված «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգին «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ն մասնակցել է «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի հետ համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Գնման ընթացակարգը կազմակերպվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում ՀՀ կառավարության 29.11.2011թ. N 1916-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգին համապատասխան:

Գնման ընթացակարգի կազմակերպման ժամանակ պատվիրատուն, հանձնաժողովի անդամները, գնման գործընթացը համակարգողը՝ համապատասխանաբար իրենց վերապահված գործառույթներն իրականացրել են «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգով և ՀՀ կառավարության 29.11.2011թ. N 1916-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգով այդ գործառույթների համար սահմանված ժամկետներում՝ կից ներկայացնելով «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից կոնսորցիումով և «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից ներակայացված հայտերը նված ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատմանը վերաբերող փաստաթղթեր:

3. ԳԲԽ-01/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի կողմից 09.01.2013թ. կողմից «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը մերժել:

4. ԳԲԽ-01/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-01/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) կողմից 09.01.2013թ. ներկայացված բողոքը, «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից կոնսորցիումով և «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, ՀՀ կառավարության աշխատակազմի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին հասցեագրված 24.01.2013թ. N ԳԿ-16 գրությունը և գրությամբ ներկայացված «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատմանը վերաբերող փաստաթղթերը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

ՀՀ կառավարության աշխատակազմի կարիքների համար «Ինտերնետ և Կորպորատիվ» ցանցի կապերի ապահովման ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգ, որը կազմակերպվել է էլեկտրոնային ձևով:

Նշված ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակցության հայտ են ներկայացրել կոնսորցիումով՝ «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ները և «Յուքոմ» ՍՊԸ-ն:

1. «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ն Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ Պատվիրատուի կողմից ստացել է օտարալեզու գրառումներով «Financial Evaluation» վերնագրով փաստաթուղթ, որը հակասում է «Լեզվի մասին» ՀՀ օրենքին:

1-ին կետի վերաբերյալ.

ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1916-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումը ներառում է՝ էլեկտրոնային գնահատում (e-Evaluation), որը ներառում է գնահատման չափանիշներին համապատասխան հայտերի գնահատումը և էլեկտրոնային եղանակով արդյունքների մասին բոլոր մասնակիցներին տեղեկացումը:

Այսինքն, պատվիրատուի կողմից բողոքաբեր կազմակերպությանը տրամադրված «Financial Evaluation» վերնագրով փաստաթուղթը վերաբերել է էլեկտրոնային գնահատմանը (e-Evaluation), որը ներառում է գնահատման չափանիշներին համապատասխան հայտերի գնահատումը և էլեկտրոնային եղանակով արդյունքների մասին բոլոր մասնակիցներին տեղեկացումը:

Ինչ վերաբերում է բողոքաբեր կազմակերպության կողմից նշված փաստաթղթի օտարալեզու լինելուն և այն պնդմանը, որ նշված փաստաթուղթը հակասում է «Լեզվի մասին» ՀՀ օրենքին, անհիմն է, քանի որ բողոքաբեր կազմակերպության կողմից չի նշվել «Լեզվի մասին» ՀՀ օրենքի հոդվածը, իսկ նշված փաստաթուղթը համակարգչային ծրագրից ներբեռնված փաստաթուղթ է, որտեղ հայերեն լեզվով նշված են ընթացակարգի մասնակիցների անվանումները և նրանց կողմից առաջարկված գները՝ թվերով և փաստաթուղթը կազմելու լեզվի ընտրությունը համակարգչային ծրագրով վերապահված չէ պատվիրատուին:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքն այս հիմքով անհիմն է:

2. Բողոքաբեր կազմակերպությունը հայտնել է, որ վերջինիս կողմից ստացված «Financial Evaluation» վերնագրով էջի ուսումնասիրությունից պարզվել է, որ «Յուքոմ» ՍՊԸ-ի գնի առաջարկում առկա է անհամապատասխանություն՝ «EO value» սյունակում նշված է 67.950.000 ՀՀ դրամը, ինչը գերազանցում է «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի նույն սյունակում առաջարկած առանց ԱԱՀ-ի գինը՝ 66.666.667 ՀՀ դրամը և իրենց համար անհասկանալի է, եթե «Յուքոմ» ՍՊԸ-ի գինը «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի առաջարկած գնից բարձր է, ինչպես է «Յուքոմ» ՍՊԸ-ն ճանաչվել առաջին տեղը

զբաղեցնող մասնակից, իսկ եթե «Յուքոմ» ՍՊԸ-ի գնի առաջարկում առկա է անհամապատասխանություն, ապա «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի 7.2.1 կետի համաձայն՝ եթե հանձնաժողովի անդամը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է նույն կետում նշված արձանագրությանը, ինչը հանձնաժողովի կողմից չի իրականացվել:

2-րդ կետի վերաբերյալ.

Ներբեռնված «Financial Evaluation» փաստաթղթում, որն ըստ էության հանդիսացել է ընթացակարգի մասնակիցների կողմից գնային առաջարկների գնահատման արդյունքների փաստաթուղթը, առկա են «EO value», «ES value», «Present value» և «Total-FDR» սյունակները:

«EO value» սյունակում ընթացակարգի մասնակցի կողմից նշվում է առաջարկվող գինն առանց ԱԱՀ-ի:

«ES value» սյունակում գնահատող հանձնաժողովի կողմից նշվում է ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում ներառված մասնակցի առաջարկված գինն առանց ԱԱՀ-ի:

«Present value» սյունակում նշվում է հաշվարկված առկա գինն առանց ԱԱՀ-ի:

«Total-FDR» սյունակում նշվում է ընդամենը առաջարկված գինն առանց ԱԱՀ-ի:

Ներբեռնված «Financial Evaluation» փաստաթղթում՝ «Յուքոմ» ՍՊԸ-ի հատվածում՝ «EO value» սյունակում նշվել է 67.950.000 թիվը, «ES value» սյունակում՝ 56.625.000 թիվը, «Present value» սյունակում՝ 56.625.000 թիվը և «Total-FDR» սյունակում՝ 56.625.000 թիվը:

Նույն փաստաթղթում՝ «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ների հատվածում՝ «EO value» սյունակում նշվել է 66.666.667 թիվը, «ES value» սյունակում՝ 66.666.667 թիվը, «Present value» սյունակում՝ 66.666.667 թիվը և «Total-FDR» սյունակում՝ 66.666.667 թիվը:

ՀՀ կառավարության «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու մասին» 29.12.2011թ. N 1916-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվել է, որ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում կիրառվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) դրույթները՝ հաշվի առնելով նույն որոշման 1-ին կետով հաստատված կարգով սահմանված առանձնահատկությունները:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ մասնակցի գնային առաջարկը, որը ներառում է նաև ինքնարժեքի հաշվարկը, ներկայացվում է ինքնարժեք (վաճառքի ինքնարժեք), շահույթ և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Կարգի 49-րդ կետի համաձայն՝ եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա մասնակցի ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափը: Ընդ որում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված համաձայնագրերով (պայմանագրերով) նախատեսված դեպքերի մասնակցի (մասնակիցների) գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Հրավերի 1-ին մասի.

- 4.1 ենթակետի համաձայն՝ ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի հայտ: Ընթացակարգի հայտը նույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է: Ընթացակարգի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է նույն հրավերի 2-րդ մասում՝ «Բաց ընթացակարգի հայտերը պատրաստելու» հրահանգում (այսուհետև՝ նաև Հրահանգ):
- 4.3 ենթակետի բ) պարբերության համաձայն՝ մասնակիցները հայտով ներկայացնում են գնային առաջարկ:

Հրահանգի.

- 2.2.8 ենթակետի համաձայն՝ մասնակիցները հայտով ներկայացնում են գնային առաջարկ, որը ներառում է նաև ինքնարժեքի հաշվարկը, որը ներկայացվում է ինքնարժեք (վաճառքի ինքնարժեք), շահույթ և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում (հրավերի N 4 հավելված):
- 4.2 ենթակետի համաձայն՝ եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա մասնակցի ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափը: Ընդ որում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված համաձայնագրերով (պայմանագրերով) նախատեսված դեպքերի մասնակցի (մասնակիցների) գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

«Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից Հրավերի հավելված 4-ը հանդիսացող գնային առաջարկում նշվել է, որ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից տրամադրված «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «Յուքոմ» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել 67.950.000 (վաթսունյոթ միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամով, որտեղ ինքնարժեքը կազմել է 53.227.500 ՀՀ դրամ, շահույթը՝ 3.397.500 ՀՀ դրամ, իսկ ԱԱՀ-ն՝ 11.325.000 ՀՀ դրամ:

«Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ների կողմից Հրավերի հավելված 4-ը հանդիսացող գնային առաջարկում նշվել է, որ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից տրամադրված «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ները առաջարկում են պայմանագիրը կատարել 80.000.000 (ութսուն միլիոն) ՀՀ դրամով, որտեղ ինքնարժեքը կազմել է 61.728.395 ՀՀ դրամ, շահույթը՝ 4.938.272 ՀՀ դրամ և ԱԱՀ-ն 13.333.333 ՀՀ դրամ:

Վերը նշված փաստաթղթի և «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ների և «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից Հրավերի հավելված 4-ը հանդիսացող գնային առաջարկներով ներկայացված գների համեմատությունից պարզ է դառնում, որ «Financial Evaluation» փաստաթղթի «Յուքոմ» ՍՊԸ-ի «EO value» սյունակում նշված 67.950.000 թիվը հանդիսանում է «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գինը, իսկ «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ների նույն սյունակում նշված 66.666.667 թիվը հանդիսանում է «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ների կողմից պայմանագրի կատարման համար առաջարկված առանց ԱԱՀ-ի ներկայացրած գինը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Հրավերի 1-ին մասի 7.3.3 ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝ գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց նույն հրավերի 2-րդ մասի 4.3 կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Այսպիսով, ակնհայտ է, որ «Յուքոմ» ՍՊԸ-ի առաջարկած գինը՝ ընդամենը 67.950.000 ՀՀ դրամ և 56.625.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի, նվազ է, քան «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ների կողմից առաջարկած գինը՝ ընդամենը 80.000.000 ՀՀ դրամ և 66.666.667 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:

Ինչ վերաբերում է Հրավերի 7.2.1 կետով սահմանված հանձնաժողովի անդամի կողմից հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք) չարտահայտելուն, ապա գտնում ենք, որ դա հանձնաժողովի անդամի իրավունքն է, այլ ոչ թե պարտավորությունը:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքն այս հիմքով անհիմն է:

3. «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է, որ 20.12.2012թ. ընկերությունը դիմել է պատվիրատուին՝ հիշյալ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների և «Յուքոմ» ՍՊԸ-ի հայտի և որակավորումը հավաստող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակների ստացման խնդրանքով, ինչը 21.12.2012թ. թիվ ԳԿ-239 գրությամբ պատվիրատուն մերժել է՝ հղում կատարելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1916-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 23, 24, 25, 26 և 32 կետերի վրա՝ անտեսելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները: Բողոքաբեր կազմակերպությունը միաժամանակ հայտնել է նաև, որ ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1916-Ն որոշմամբ հաստատված կարգը չի արգելում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված արձանագրության կազմումը, դրա և մասնակցի հայտի և որակավորումը հավաստող փաստաթղթերի տրամադրումը ընթացակարգի մասնակիցներին «armeps» համակարգի միջոցով:

3-րդ կետի վերաբերյալ.

«Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ն 20.12.2012թ. N 405 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով տրամադրել «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և նույն ընթացակարգի հաղթող ճանաչված մասնակից՝ «Յուքոմ» ՍՊԸ-ի հայտի և որակավորումը հավաստող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի info@adc.am էլեկտրոնային փոստին:

ՀՀ կառավարության գործերի կառավարիչը 21.12.2012թ. N ԳԿ-239 գրությամբ «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ին տեղեկացրել է, որ էլեկտրոնային ձևով գնման

ընթացակարգերը կազմակերպվում են ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1916-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի համաձայն: Գնման ընթացակարգի հայտերի գնահատումը և ընթացակարգի մասնակիցներին դրանց մասին ծանուցումն իրականացվել են վերը նշված կարգի 8-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ և 32-րդ կետերին համապատասխան:

Տեղեկացրել է նաև, որ «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի պահանջի դեպքում կտրամադրվի «Յուքոմ» ընկերության կողմից ներկայացված որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերի՝ գնահատող հանձնաժողովի անդամների կողմից հաստատված գնահատման թերթիկները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի.

• 1-ին մասի համաձայն՝ եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝

1) պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը.

2) գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը.

3) հրավերը և դրանում կատարված փոփոխությունները.

4) գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները.

5) հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները.

6) հայտերով ներկայացված գները.

7) հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները.

8) հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը.

9) պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

10) գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը.

11) գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները.

12) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

• 4-րդ մասի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր է գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց հինգ օրացուցային օրվա ընթացքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքաբեր կազմակերպության այն պնդումը, թե պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջներն, անհիմն է, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը վերաբերում է գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթերին, իսկ նույն հոդվածի 1-ին մասով հստակ սահմանված է, թե ինչ է պարունակում գնման ընթացակարգի արձանագրությունը և նշված հոդվածով չկա որևէ սահմանում, որ գնման ընթացակարգի արձանագրությունը ներառում է ընթացակարգի մասնակցի հայտը և որակավորումը հավաստող փաստաթղթերը:

Ավելին, Պատվիրատուն 21.12.2012թ. N ԳԿ-239 գրությամբ «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ին տեղեկացրել է, որ պահանջի դեպքում կտրամադրվի «Յուքոմ» ընկերության կողմից ներկայացված որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերի՝ գնահատող հանձնաժողովի անդամների կողմից հաստատված գնահատման թերթիկները:

Ինչ վերաբերում է պատվիրատուի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտմանը, ապա Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ այն նույնպես անհիմն է, քանի որ Պատվիրատուի կողմից բողոքաբեր կազմակերպության ուղղված գրությունից երևում է, որ Պատվիրատուն ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1916-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգին համապատասխան բողոքաբեր կազմակերպությանը էլեկտրոնային եղանակով տրամադրել է նշված կարգով սահմանված տեղեկատվությունը, որոնց չտրամադրման վերաբերյալ բողոքաբեր կազմակերպությունը որևէ առարկություն ներկայացված բողոքով չի հայտնել:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքն այս հիմքով անհիմն է:

4. Բողոքաբեր կազմակերպությունը հայտնել է, որ հայտերի բացումը տեղի է ունեցել 2012թ. նոյեմբերի 26-ին և հիմք ընդունելով «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի 7.5 և 8.1 կետերը՝ «Յուքոմ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու առավելագույն ժամկետը պետք է լիներ 11.12.2012թ.-26.11.2012թ. /հայտերի բացման օր/ + 5 աշխատանքային օր /7.5 կետով սահմանված ժամկետ/ +3 +3 աշխատանքային օրեր /8.1 կետով սահմանված ժամկետ/, սակայն «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակումն իրականացվել է 2012թ. դեկտեմբերի 20-ին, ինչը հակասում է «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի պահանջներին:

4-րդ կետի վերաբերյալ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Հրավերի 1-ին մասի 7.5 ենթակետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հետո առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հինգ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովին է ներկայացնում ընթացակարգին իր՝ նույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները): Փաստաթղթերն ուղարկվում են Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեով՝ gnumner@gov.am:

Հրավերի 8.1 կետի համաձայն՝ հանձնաժողովը գնահատում է հրավերի 7.5 կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին: Նույն կետով նախատեսված հայտի ամբողջական և լիարժեք գնահատման արդյունքում՝ հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն արձանագրվելու (հայտնաբերվելու) դեպքում՝ գնումների համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը սահմանված

ժամկետում՝ շտկվելու դեպքում մասնակցի հայտը գնահատվում է բավարար, չշտկվելու դեպքում, հանձնաժողովի որոշմամբ, տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքաբեր կազմակերպության այն պնդումը, թե գնահատող հանձնաժողովի կողմից Հրավերի 7.5 և 8.1 կետերով նախատեսված ժամկետները պահպանելու դեպքում «Յուքոմ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու առավելագույն ժամկետը կլիներ 11.12.2012թ. և այն որ, «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակումը, որն իրականացվել է 2012թ. դեկտեմբերի 20-ին և հակասում է «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-13/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի պահանջներին, անհիմն է, քանի որ Հրավերի 7.5 և 81 կետերով սահմանվում է ընթացակարգի արդյունքներով առաջին տեղը զբաղեցրած մասնակցից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման և նշված փաստաթղթերում անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում դրանք վերացնելու համար մասնակցին առաջարկվող ժամկետներին:

Բացի այդ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև Հրավերով սահմանված չէ, որ ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը Հրավերով նախատեսված ժամկետներում ներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում տեղ գտած անհամապատասխանությունը Հրավերով սահմանված ժամկետներում վերացվելու դեպքում, գնահատող հանձնաժողովը պարտավոր է նշված փաստաթղթերի գնահատումն իրականացնել նույն օրը:

Հետևաբար, տվյալ դեպքում 2012թ. դեկտեմբերի 20-ին պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակումը չի կարող համարվել այն հրապարակելու համար սահմանված ժամկետների խախտում:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքն այս հիմքով անհիմն է:

5. Բողոքաբեր կազմակերպությունը նշել է նաև, որ վերոգրյալ տեղեկատվության չտրամադրումը, ընթացակարգի ժամկետների խախտումները հակասում են նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներին:

5-րդ կետի վերաբերյալ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների

գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքների վրա:

Հիմք ընդունելով բողոքաբեր կազմակերպության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի խախտման հիմքում ընկած հանգամանքների վերը նշված վերլուծությունը, գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից պահպանվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքն այս հիմքով անհիմն է:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի կողմից 09.01.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գոռ Ենոքյան

Անդամ՝ Էդգար Հակոբյան